ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆԻ Ս. ՎԱՐԴԱՆՅԱՆԻ

ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑԻ ՏՆՕՐԵՆ՝ Ա. ԱՎԱԳՅԱՆ

31.08.2023թ.

Բյուրեղավանի Ս. Վարդանյանի անվան ավագ դպրոցի 2023-2024 ուսումնական տարվա դասղեկի աշխատանքային պլան 6-րդ «Բ» դասարան

Դասղեկ՝ Ն.Ուզունյան

ԿՐԹԱ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1.ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

(դասարանի ընդհանուր բնութագիրը) Դասարանը բաղկացած է 23 սովորողից, 11տղա,12աղջիկ: Ընդհանուր առմամբ աշակերտները ունեն լավ ընդունակություններ: Գերազանց առաջադիմում են 10 սովորող, հարվածայինները՝ 12: Դասարանում բոլոր աշակերտները համախմբված են: Դասարանում կա 1 ԿԱՊԿՈՒ աշակերտ, դասարանում կա ներառող կրթական միջավար: Երեխաները հաճախում են դպրոց ճիշտ ժամանակին և ցուցաբերում են ակտիվություն: Դասարանում կա առողջ մրցակցային, ընկերական մթնոլորտ և բազմակողմանի հետաքրքրություններով զարգացող սովորողներ :

2. Ուսումնադաստիարակչական նախատեսվող աշխատանքները 2023-2024 ուստարվա ընթացքում.

մշտապես պետք է հետևել դասարանի վարքին և ուսման առաջադիմությանը: Հրավիրել ծնողական ժողովներ, որոնք կնպաստեն թերությունների և թերացումների վերացմանը: Աշակերտների մոտ ձևավորել բազմաբնույթ կարողություններ (կարգ ապահություն, մաքրություն, համագործակցություն, փոխօգնություն): Նախատեսվում է ճանաչողական այցելություններ մշակութային, պատմական օջախներ, ինտերակտիվ ժամանցի վայր:

3. ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

3.1 Հոգևոր դաստիարակություն Այս նպատակով կազմակերպել էքսկուրսիա դեպի մոտակա հոգևոր մշակութային կենտրոններ: Աշակերտների մոտ սերմանել սեր և հարգանք քրիստոնեության նկատմամբ: Նույն նպատակով կատարել պատմական ակնարկ, որը կնպաստի հոգևոր դաստիարակության ձևավորմանը:

3.2 Գեղագիտական դաստիարակություն Ֆիլմերի միջոցով ցուցադրել և բացատրել, թե գեղեցիկը ինչ դեր ունի ներկայիս կյանքում: Բացի այդ լսել

աշակերտների կարծիքը այդ նյութի վերաբերյալ: Կյանքից բերել օրինակներ և ձևավորել գեղագիտական ճաշակ:

3.3 Ռազմահայրենասիրական դաստիարակություն Հայրենասիրության կրթության վերաբերյալ կազմակերպել քննարկումներ : Նշել մի շարք ֆիդայիների անուններ և թվարկել այն բնավորության գծերը, որտեղ ակներև է հայրենասիրությունը և ռազմարվեստ ձևերը:

3.4 Ֆիզիկական դաստիարակություն Դասապրոցեսին պետք է ցուցաբերել ակտիվություն : Բացատրել և պահանջել, որ աշակերտները հետևեն իրենց ֆիզպատրաստությանը: Կոփեն իրենց մարմինները ֆիզվարժությունների և հնարների սպորտլանդիաներին և այլ նման միջոցառումներին, խմբակներին ներգրավված լինելու միջոցով:

3.5 Աշխատանքային դաստիարակություն Աշակերտների մոտ ձևավորել սեր դեպի աշխատանքը: Կոլեկտիվ աշխատանքի կազմակերպման միջոցոց ցույց տալ միասնական աշխատանքի արդյունքը:

3.6 Բնապահպանական դաստիարակություն: Պետք է կազմակերպել էքսկուրսիաներ դեպի բնության գիրկը և այդ ընթացքում թվարկել բնապահպանական մի քանի խնդիրներ, որոնք առկա են իրենց շրջապատում և այդ խնդիրը գլոբալ է:

4. Դպրոց-ընտանիք կապը.

Երեխաները պետք է հասկանան, որ ընտանիքը հանդիսանում է պետության կորիզը: Սովորողների դաստիարակության համար կարևոր է ծնող-աշակերտ-ուսուցիչ փոխլրացված կապը:

ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ուսումնական շաբաթներ	Ուսումնադաստիարակչական աշխատանքների բովանդակությունը	Կատարման ժամկետը	Կատարողներ
I	Գիտելիքի և դպրության օր:	01.09.2023թ.	դասղեկ
II	Կարգապահություն: Նպատակների սահմանում:	05.09.2023թ.	դասղեկ
III	Աշխատանքային ռեժիմի, ընդմիջման կազմակերպման, դասաժամերի տևողության նոր առարկաների պահանջի մասին:	12.09.2023թ.	դասղեկ
IV	Սեպտեմբերի 21 ՀՀ Անկախության օր:	19.09.2023թ.	դասղեկ
V	Համընդհանուր ներառող միջավայր և կրթություն:	26.09.2023թ.	դասղեկ
VI	Կազմակերպվածություն, կարգապահության խնդիրը և պատասխանատուները:	03.10.2023թ.	դասղեկ
VII	Իմ ընտանիք	03.10.2023թ.	դասղեկ
VIII	Հարգանքի ձևավորումը դիմացինի նկատմամբ:	10.10.2023թ.	դասղեկ
IX	Համբերատարության և ընկերասիրության ձևավորումը:	17.10.2023թ.	դասղեկ
X	Արժեհամակարգի ձևավորումը:	31.10.2023թ.	դասղեկ
XI	Ինքնավերլուծություն:	07.11.2023թ.	դասղեկ
XII	Անհատ և հասարակություն:	14.11.2023թ.	դասղեկ
XIII	Համակարգիչը ընկեր է, թե փշնամի:	21.11.2023թ.	դասղեկ
XIV	Քաղաքացիական գիտակցություն, ինքնություն:	28.11.2023թ.	դասղեկ
XV	Ինքնաճանաչում, ինքնակրթություն:	05.12.2023թ.	դասղեկ
XVI	Պատասխանատու քաղաքացի:	12.12.2023թ.	դասղեկ
XVII	Կոնֆլիկտների հաղթահարում:	19.12.2023թ.	դասղեկ
XVIII	Գիրքը իմ կյանքում:	26.12.2023թ.	դասղեկ
XIX	Գիտության, տեխնիկայի, արվեստի մասին:	09.01.2024թ.	դասղեկ
XX	Պետք է արդյոք խնայել:	16.01.2024թ.	դասղեկ
XXI	Մասնագիտական կողմնորոշում:	23.01.2024թ.	դասղեկ
XXII	Բնական պաշարների զրաղետ, խնայողաբար օգտագործում:	30.01.2024թ.	դասղեկ
XXIII	Պահպանենք բնությունը:	06.02.2024թ.	դասղեկ
XXIV	Էկոլոգիական հիմնախնդիրներ:	13.02.2024թ.	դասղեկ
XXV	Գեղեցիկի միջոցով դեպի մարդկայինը:	20.02.2024թ.	դասղեկ
XXVI	Հավասարություն, արդարություն/ավելի քիչ, ավելի շատ, հավասար/:	27.02.2024թ.	դասղեկ
XXVII	Ազնվություն ճշմարտախոսություն:	05.03.2024թ.	դասղեկ
XXVIII	Ինչպես կազմակերպել ասելիքը:	12.03.2024թ.	դասղեկ
XXIX	Ինչպես հիմնավորել պատասխանը:	02.04.2024թ.	դասղեկ
XXX	Դպրոցն ամենից առաջ գիրք է:Ուսուցիչն իմ կյանքում:	09.04.2024թ.	դասղեկ
XXXI	Պահանջը ներկայացնելու ճանապարհը:	16.04.2024թ.	դասղեկ
XXXII	Կյանքից էլ թանկ:	23.04.2024թ.	դասղեկ

XXXIII	Փոխադարձ վստահություն:	30.04.2024թ.	դասղեկ
XXXIV	Երեխաները պետք է ապրեն ստեղծագործության մեջ, ստեղծագործական աշխարհում:	07.05.2023թ.	դասղեկ
XXXV	Ճանաչենք մեր հայրենիքը:	14.05.2024թ.	դասղեկ